# ՆՈՐ-ԴԱՐ

№172 ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ Շաբաթ, 27 Սեպտեմբերի, 1903 Շաբաթ, 27 Սեպտեմբերի, ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 172

Տարին 10 րուբ. վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը 3 ր. 50 կ. ամիսը՝ (Թիֆլիսում) 1ր., հասով 5 կ.։ Բաժանորդ կն գրւում միմիայն խմբագրատանը՝ Դաւիդով. փողոց, № 5.

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis, Rédaction «Nor-Dar»

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների գաւին 2 կ., րեկլամների համար կրկնապատիկ



Երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ ամսիս 24-ին ի Տէր հանգեաւ Քուլժայիսի դործակալ

**ԴԱՒԻԹ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅ ԵԱՐԱԼԵԱՆ**

Յայտնելով այս անդառնալի և թանկագին կորուստի մասին, հանդուցեալոյ վեհանները՝ Յովսէփ աւագ քահանայ Ամիրալեան և իւր տիրուհին Աննա, նոյնպէս միւս վեհան՝ Նիկողայոս Ռափայէլեան և իւր ամուսին Եղիսաբէթը խնդրում են ազգականներին, ծանօթներին և բարեկամներին, որ հանդուցեալի յիշատակը յարգեն իրենց ներկայութեամբ։ Թաղումն է ամսոյս 28-ին, կիրակի օրը, Քուլժայիսի հայոց եկեղեցու գաւթում։

Ամբիծքը ամենայն երեկոյ 6 ժամին։

(256) 2—2

// Տարի 1903 թ.

ԱՐՏԻՍՏԻՔԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Հինգշաբթի, հոկտեմբերի 2-ից կը սկսուի

ՀԱՑՈՑ ԴՐԱՄԱՏԻՔԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

**խմբի ներկայացումները**

Խմբի կազմը. տ. տ. Ազնիւ, Աւետեան, Խիմշաեան, Մայսուրեան, Մելիքեան, Նոնիկեան, Սիրանոյշ, Վարդուհի, Սաթենիկ-Հաշկեան և ուրիշները, պ, պ. Աբէլեան, Ագեան, Ալիխանեան, Անդրոնիկ, Ադայեան, Աւետեան, Յարութիւնեան, Պետրոսեան, Մամիկոնեան, Ռշտունի, Տէր-Դաւթեան և ուրիշները.

Ռեժիսսեօրներ՝ տ, Սիրանոյշը, պ. պ. Աբէլեան և Պետրոսեան.

Ներկայացումները սկսուելու են ճիշտ ժամը 8-ին

Տեղերի գները պակասացրած են։ Ցերեկուան ներկայացումներին գները կիսով չափ պակաս են, Աբոնըմենտ է բացուած հինգշաբթի օրերը տրուող առաջին ուժ ներկայացման 20% զիջումով։

(258) 1—1

**ԱՐԱՔՍԵԱՆԻ ՀԱՒԱՔԱՐԻ ՆՈՐ ԹԱՏՐՈՆ**

(Կոստանդինովսկայա փողոց, տուն Վարշամեանի)

**բացման առթիւ**

ԿԻՐԱԿԻ, ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ 1903 Թ.

ՀԱՑՑ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԽՕՒՄԲԸ

դեկավարութեամբ

**Պ. Ա. ԱՐԱՔՄԵԱՆԻ**

ԿՆԵՐԿԱՅԱՑՆԷ

**ՊԼՊՕ**

Կոմ. 3 գործ. հեղ. Դ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԻ

Մասնակցում են տ. Արաքսեան, օր. Բէզիշեանեան, օր. Հայկանուշ, պ. պ. Ամօ-Խարազեան, Բեյոյեան, Խուդանեան, Ղուշչեան, Գուլազեան, Ադելխանեան,

Սկիզբն է ճիշտ 8½ ժամին երեկոյեան

(257) 1—1 Դեկավար. ԱՐԱՔՍ ԵԱՆ


ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Ի՞նչ են ասում թուերը։

Քրոնիկոն.—Լուրեր։

Մեզ գրում են.—Ս. Էջմիածնից։

Մեր կեանքը

Մամուլի շուրջը

Թղթակցութիւններ.—Նամակ Պարսկաստանից.—Թեհրան։

Գ. Պոլսի հայ թերթերից։

Քաղաքական.—Լոնդոնի միութիւն։ Ապստամբութիւնը չարունակուելու է թէ ոչ։ Մակեդոնացիների պահանջները։ Ճապոնական արտասուքներ։

«Նոր-Դար»-ի հեռագրները։

«Նոր-Դար»-ի պատասխանները։

Բանասիրական.—Հոմէոպատիայի ըմ հիզրը և ներկայ դրութիւնը։

Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 25-ն սեպտեմբերի, 1903 Թ.

## Ի՞ՆՉ ԵՆ ԱՍՈՒՄ ԹՈՒԵՐԸ

Ազգերին դէպի լուսաւորութիւն և քաղաքակրթութիւն մղող խթաններից մինն ևս վիճակագրութիւնն է։ Այն ժողովուրդները, որոնք կանգնած են զարգացման դուրս է խօսել վիճակագրութեան ունեցած նշանակութեան ու կարևորութեան մասին. այդ թողնում ենք առաւել յարմար մի առիթի և այս անգամ մեր ընթերցողների ուշադրութիւնը կամենում ենք դարձնել «վիճակագրութիւն» անունը կրող միքանի թուանշանների վրայ, որոնք վերաբերում են Կովկասի ամենամօտ անցեալի գործունէութեան։

Ընթերցողը թերթիս սոյն համարի «Մամուլի շուրջը» բաժնի մէջ կպատահի ռուսական «С. П. Вѣдомости» թերթից քաղուած մի հատուածի, որի մէջ ասուած է, թէ Կովկասում 711,284 հոգուն ընկնում է մի գիմնազիա և 205,526 հոգուն—մի քաղաքային ուսումնարան։ Բացի այդ, հիւսիսային Կովկասում 10,000 բնակչի վրայ գալիս է 176 աշակերտ, իսկ Անդրկովկասում, նոյն թուի վրայ—102 աշակերտ, որ նշանակում է, այդ երկու տեղերի արդիւնքը միացրած, գալիս է հարիւր հոգուն 1,39։

Կովկասի զրագիտութեան չափը արտայայտող այդ թուանշանը բոլորովին կորցնում է իւր նշանակութիւնը, երբ այն առնում և համեմատում ենք արևմտեան Եւրոպայի զրագիտութեան տուած թուանշանների հետ, որոնք՝ ընդհանուր առմամբ հարիւրին 5—10—12-ից պակաս չեն։ Կարծում ենք, տարբերութիւնը աչքի չընկնելու չափ էլ փոքր չէ։

Սակայն, որևիցէ երկրի ընդհանուր զարգացման գործի մէջ հասարակ գրագիտութիւնը չի կարող այնքան կարևոր դեր խաղալ, որքան ժողովրդի միջին ընդհանուր կրթութիւնը, որը, ինչպէս վերև առաջ բերուած թիւը ցոյց է տալիս, չափազանց անբաւականացուցիչ է։ Արդիւնաբերութեան բոլոր ճիւղերի, արհեստների, գիւղական տնտեսութեան բոլոր բաժանմունքների զարգացումն ու բարգաւաճումը ահագին կապ ունեն գիտութիւնների տարբերան գիտելիքների հետ, ուրեմն, ինչպէս կարող են դրանք շօշափելի արագութեամբ և օգտակարութեամբ առաջ շարժուել, երբ երկրի բնակչութեան ընդհանուր զարգացման մակերևոյթը այդքան ստոր աստիճանների վրայ է կանգնած։

Բայց անցնենք այդ։

Երկրի արդիւնաբերութեան այս կամ այն ճիւղը, լինի դա երկրագործութիւն, անասնապահութիւն, գինեգործութիւն, և այլն, և այլն, այնքան արդիւնաւէտ, և ժամանակի ու բնակչութեան պահանջներին այնքան համապատասխան կլինեն, որքան նրանց գործադրութիւնը, ապատուելով իւր հնահպետական ու անդրջրհեղեղեան կապանքներից, մօտեցած են գիտութեան և իրենց հիմք ունեն նրա մշակած սկզբունքները։

Այս այսպէս լինելուց յետոյ ինչ վիճակի մէջ ենք գտնում մասնագիտական ուսումը առհասարակ ամբողջ Կովկասում։ Մեր խեղճ ու կրակ վիճակագրութիւնը մեզ այդքան տեղեկութիւն դոնէ տալիս է, որ Կովկասի բնակչութիւնը չունի ոչ մի հատ միջնակարգ գիւղատնտեսական ուսումնարան, մինչդեռ այդ երկրի ժողովրդի համարեա 9/10-ի զբաղմունքի առարկան և ապրուստի միջոցը կազմում է երկրագործութիւնը իւր զանազան ստորաբաժանմունքներով։

Շատ հասկանալի է, որ եթէ երկրագործը չդիտէ ուսումնասիրել իւր հողի յատկութիւնները, անծանօթ է նրան բեղմնաւորելու միջոցներին, անկարող է իւր ճակատի քրտինքի արդիւնքը փչացնող պատուհասների դէմ կռուելու, կրկնում ենք, եթէ նա զուրկ է այդ ամենակարևոր պատրաստութիւններից, նրա գործը, զբաղմունքը չի կարող տալ սպասուած ու անհրաժեշտ եղած արդիւնքը։ Միևնոյնը կարելի է ասել այգեգործի, անասնաբուծի և երկրի արդիւնաբերութեան ուրիշ ճիւղերով պարապողների համար, որոնցից մխիթարական կասկած չունի երկրի ընդհանուր յառաջադիմութիւնը, ինչպէս անհատական, նմանապէս և հանրային բարեկեցութեան տեսակէտից։

Մասնագիտական ուսումը ժողովուրդների քաղաքակրթութեան գործում ամենակարևոր լծակն է, չմտածել դրան զօրացնելու մասին—անկարելի է։

Այդ հողոր ծանրանում է հատկապէս թէ պատշաճաւոր իշխանութիւնների և թէ հասարակութեան վրայ ի դէմս իւր առաջաւոր մասի։ Դրանցից իւրաքանչիւրը ունի իւր պարտականութիւնները, որոնց, ժամանակն է, վերջապէս ամենալուրջ կարևորութիւն տալու։

## ՔՐՈՆԻԿՈՆ

Վաղը, կիրակի, սեպտեմբերի 28-ին Վարագայ ս. խաչի ածի օրը, լրանում է Տ. Տ. Մկրտիչ Ա. ամենայն հայոց Կաթողիկոսի օծման տասնըորդ տարեդարձը։

— Արխատակէս հպ. Սեդրակեանը սեպտեմբերի 25-ին Թիֆլիսի վրայով անցաւ Ս. Էջմիածին։

—Կովկասի չրջանի զինուորական դատարանի քննութեան համար նշանակուած գործերն իրենց տեղերում քննելու համար, Կովկասի կառավարչապետը, «Կաւկազ»-ի ասելով, թոյլ է տուել զինուորական ժամանակաւոր դատարաններ բանալ Երևանում, Ալէքսանդրապոլում և Կարսում, զինուորական դատաւոր կներկալ մայոր Ռուլիչկու նախագահութեամբ։

— Պետերբուրգից «Կաւկազ»-ին հեռագրում են, որ Բիբի-Էյբաթի նաւթահողերի աճուրդների գործի քննութիւնը, որը նշանակուած էր կատարվիչ սենատոր սեպտեմբերի 24-ին, յետաձգուած է։

— «Թիֆլիսի ժողովարանին» դալիճում այս սեզոնին ևս տրուելու են հայերէն հանրամատչելի ներկայացումներ թատերասէրների մասնակցութեամբ։ Տոմսերի գները լինելու են 30 կոպէկից սկսած մինչև 1 րուբլի։ Առաջին ներկայացումը նշանակուած է հոկտեմբերի 7-ին, խաղալու են Ս. Նունդուկեանցի «Պէպօ»-ն։

— Ճանապարհների հաղորդակցութեան Կովկասի չրջանի վարչութիւնը նոր խճուղի է չինում Կարսից դէպի Օլթի Մեղենեկի զառիվայրի վրայով։

— Երբեմն հատուածաբար Փէտրոով թոյլատուութիւն է խնդրում Գանձակում հեռախօսի գանց չինելու։

— «Կասպի» լրագիրը հաղորդում է, որ պարսկական բամբակի արտահանութիւնն այս տարի կրկնապատկուել է։ Այդ բանը բացատրւում է նրանով, որ արտասահման փիլտաները գնում են գրեթէ բացառապէս պարսկական բամբակ, որ չատ աւելի էժան է, քան Միջին Ասիայի բամբակը։

— Արևմտեան Անդրկովկասում թէյի մշակման ընդարձակ հիմունքների վրայ դնելու մտադրութիւնը մի քանի հանգամանքների պատճառով յետաձգուած է։ Այնուամենայնիւ, տեղական բնակչութեանը թէյի մշակման հետ ծանօթացնելու նպատակով, երկրագործութեան և պետական կալուածների մինիստրութիւնը տեղական կառավարչական երկրաբանին յանձնարարել է այդ մասին մի կարճ ձեռնարկ պատրաստել վրացերէն թարգմանութեամբ։

— Խմբագրութիւնս ստացաւ Գ. Կորխանեդեի «Методическое руководство къ преподованію русскаго языка по руководству того же автора «Живое Слово». Այս ձեռնարկը տպուած է Թիֆլիսում և արժէ 30 կ.։

—

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻՑ.—Այս չաբաթ Մայր Աթոռը այցի էին հկել իտալացի յայտնի ճանապարհորդներ և պատուաւոր ընդունելութիւն գտնելով դիտեցին Թանգարանը, մատենադարանը, Զուարթնոց ևկեղեցին և այլ հնութիւններ աւժ. Կարապետ վարդապետի առաջնորդութեամբ և չնորհակալութիւն յայտնելով գոհ մեկնեցին այստեղից։

—Սամարից Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանը մի հեռագրով հաղորդում է, որ ինքը ճանապարհորդում է ս. Էջմիածին։

## ՄԵՐ ԿԱՆԱՑՔ

—

Եթէ մի րոպէ ընդունենք այն տիրող կարծիքը. թէ ժամանակակից հայ կինը՝ իբրև ամուսին և իբրև ընտանիքի անդամ, բաւական առաջադիմութիւն է արել և զգալի կերպով տարբերւում է իւր նախորդներից. եթէ մի րոպէ ընդունենք, որ ժամանակակից կրթուած հայ կինը ընտանիքի մէջ ներկայացնում է այժմ իբրև մի անկախ անձնաւորութիւն, հետու ասիացի կնոջ սարկական հայեցակէտներից ու նախապաշարմունքներից եթէ մի րոպէ ընդունենք, որ ժամանակակից հայ կինը իւր մտաւոր և բարոյական զարգացմամբ, իւր ինքնճանաչութեամբ հետզհետէ սկսում է իւր իրաւունքներն ու պարտաւորութիւնները ճանաչել, որ նա հետզհետէ գտնում է գնահատող իւր մարդկային արժանաւորութիւնը, պաշտպանում է իւր իրաւունքները իբրև ընտանիքի գիտակցական անդամ. եթէ, կրկնում ենք, ընդունենք այդ բոլորը,—այնուամենայնիւ չենք կարող չխոստովանել, որ իբրև ընտանիքի անդամ, իբրև երեխաների մայր, կինը մեզանում գեռ մի որոշ տիպ չէ ներկայացնում։ Մեզ չպէտք է խաբեն այն արտաքին փայլը և եւրոպականութիւնը, որ մուտք են գործել մեր ընտանիքների մէջ, զլիւս այն դայեակները և այն ծծմայրները, որոնք ներկայումս, ցաւ է ասել, իբրեն

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՎԱՆԱՅ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ

# ԳՈՒՆԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՎԱՆԱՅԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ

—

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՆՕՐԷՈՒԹԻՒՆ

Ի ՎԱՆԱՅ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔԻ

Ի ՏԱՐԻ 1784 ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ԵՒ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԱԼ Ի ՓԱՐԻԶ ՎԱՂՆԵՐՈՒ ՄԷՋ

Ի ՏԱՐԻ 1784 ի Փարիզ հաստատուած ու վերականգնեալ Հայոց Գունահանութիւնը, որ ունի իր մէջ ներկարարական, ներկաթափական եւ ներկաներկական գործարանները, ստանձնած է ներկել ամէն տեսակ բուրդ, մետաքս, բամպակ եւ կտաւ, ինչպէս նաեւ ամէն տեսակ կերպասներ, ժապաւէններ, գուլպաներ, ձեռնոցներ եւ այլն, ամէն գոյնի եւ ոճի վրայ, ինչպէս նաեւ ներկել ամէն տեսակ փետուրներ, ինչպէս նաեւ ներկել եւ մաքրել ամէն տեսակ մորթեղէններ

Ա. Ալիխանեան

(Կենդ. մեր թղթ.)

Ալիխանեան Ալեքսանդր Ալեքսանդրի, ծնած 1882 թուին Ալեքսանդրապոլի գաւառի Ղարաքիլիսայի գիւղերից մէկում, ուր հայրը ունէր մեծ տնտեսութիւն։ Նա մանկութեան տարիներին ստացել է տեղական ծխական դպրոցի կրթութիւն, ապա ուսանել է Ալեքսանդրապոլի ռէալական դպրոցում, որ աւարտել է 1900 թուին։ Դպրոցական տարիներին նա ցոյց է տուել ուսման մեծ ընդունակութիւններ, յատկապէս մաթեմատիկական գիտութիւնների նկատմամբ։ Ռէալական դպրոցն աւարտելուց յետոյ Ալիխանեանը մեկնել է Պետերբուրգ, ուր ընդունուել է Պետերբուրգի համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետի բնական բաժինը։ Համալսարանում նա ուսանել է 1901—1905 թթ., ստանալով բնագէտի վկայական։ Համալսարանական տարիներին Ալիխանեանը մասնակցել է ուսանողական շարժումներին, եղել է ուսանողական կազմակերպութեան անդամ։ Ուսանողական շարժումներին մասնակցելու համար նա մի քանի անգամ ձերբակալուել է, ենթարկուել է կալանաւորման։ Համալսարանն աւարտելուց յետոյ Ալիխանեանը մնացել է Պետերբուրգում, զբաղուել է գիտական աշխատանքով։ Նա հրատարակել է մի շարք գիտական աշխատութիւններ, որոնք տպագրուել են Պետերբուրգի գիտական ակադեմիայի «Известия»-ում։ Ալիխանեանի գիտական աշխատութիւնները նուիրուած են եղել հիմնականում ֆիզիկական երեւոյթների ուսումնասիրութեանը։ Նրա գիտական աշխատութիւնները ճանաչում են ստացել ինչպէս Ռուսաստանում, այնպէս էլ արտասահմանում։ Ալիխանեանը ունեցել է գիտական լայն կապեր Եւրոպայի գիտնականների հետ։ Նա եղել է Եւրոպայի մի շարք համալսարանների պատուաւոր անդամ։ Ալիխանեանը ունեցել է նաեւ մեծ մանկավարժական գործունէութիւն։ Նա եղել է Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր, դասախօսել է Պետերբուրգի պոլիտեխնիկական ինստիտուտում։ Ալիխանեանը մահացել է 1946 թուին։

Ա. Ալիխանեանի մահուան առթիւ Պետերբուրգի համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետի գիտական խորհուրդը յատուկ նիստ է գումարել։ Նիստում ելոյթ են ունեցել ակադեմիկոս Ա. Ֆրիդման, պրոֆեսորներ Ա. Ռիմսկի-Կորսակով, Ա. Ֆոկ, Ա. Ֆոմին, Ա. Ֆրիդման, Ա. Ֆրիդման, Ա. Ֆրիդման

նշանակուել է Ռուսիան 2ժուանից և Մուկեդնից իւր զօրքերը հեռացնելու համար, նկատելի է, որ ձապոնիայի լարումը սաստկանում է։ Այստեղի դիւանագիտական շրջաններին յայտարարւում է, թէ յոյս կայ խնդիրը բարեկամաբար լուծելու չնչին փիջումների շնորհիւ, որոնք սպասւում են Ռուսիայից Մանջուրիայի և Քորէայի մասին եղող բանակցութիւնների ժամանակ։ Ռոզէնը վերադարձաւ Պորտ-Արտուր։ Շաբաթ օրը Ռոզէնը խորհրդակցութիւն ունեցաւ Կամուրի հետ, որը յայտարարեց, թէ ինքը մեծ յուսով է նայում ապագայի վրայ։ Զինուորական և ծովային մինիստրներն այդ բանից յետոյ երկարատև ունկնդրութիւններ ունեցան կայսրի մօտ և խորհրդակցեցին Իտոյի ու մինիստր-նախագահի հետ, որոնք յայտարարեցին, թէ նաւատորմիղը պատրաստ կպահուի։ զօրաբանակի համար ևս պաշարներ են պատրաստուած։ Զինագործարաններում աշխատանքներն եռանդով առաջ են տարւում արդէն վաղուց։

Կ ՊՈԼԻՍ.—Ռուսիան և Աւստրիան բողոքեցին Հիլմի-փաշայի մակեդոնական յանձնաժողովի նախագահ նշանակուելու դէմ, արգելեցին ներկայացրած ծրագրի մէջ փոփոխութիւնները մացնելը և նկատեցին, որ Մակեդոնիայում չպէտք է նախապատիւ ուշադրութիւն դարձուի ոչ բուլղարականն, ոչ էլ միւս ազգութիւնների ցանկութիւնների վրայ, այլ պէտք էրացառապէս գործադրուի հաստատապէս որոշուած ռեֆորմների ծրագիրը։

Սեպտեմբերի 26-ին

ՍՈՖԻԱ.—Ֆերուխ-բէյը տեղիս կառավարութիւնից պահանջում է, որ նա ձեռնարկի պինդ միջոցներ լինելու։ Պետրոմն ևս իւր կողմից պնդում է, որ Թիւրքիան էլ իւր զօրքերը արձակի, և վերջինս երկու անգամ աւելի մեծ քանակութեամբ, քան Բուլղարիան։

ՀԻԼՎԵՐՍՈՒՄ.—Նախկին նախագահ Կրիւգէրը մեկնեց դէպի Մենտօնա։ Այսօր երեկոյեան մօտ հազարհոգուց բաղկացած ամբոխը ցոյցեր կատարեց փողոցներում և ոստիկանութեանը քարկոծեց Վիքսւորուած է հինգ ոստիկան։

ՊԱՐԻԶ.—Տեղս պէտք է դումարուի միջազգային համաժողով՝ Երևելքից ժանտախտի ու խոլերիայի տարածուելու դէմ նախազգուշական կանոնները վերջնականապէս մշակելու համար։

ԱՍԽԱԲԱԴ.—Ընջանի կառավարչի ներկայութեամբ սկսուեցին արևելագէտների ընկերութեան դասախօսութիւնները։ Դասախօսութեան նիւթն էր Թիւրքմէնների աւանդական իրաւունքները ընթերցումը գրաւել էր ունկընդիրների այնքան մեծ բազմութիւն, որ լսարանը չէր կարողացել բոլոր ցանկացողներին պարփակել։

ՈՒԵՉԻՆԳՏՈՆ. — Չանքայում ստորագրուեց ամերիկա-չինական պայմանագիրը։ Չին-ճապոնականն էլ պէտք է ստորագրուի հրեկոյեան։

ՍՈՖԻԱ.—Մինիստրութեան բերան «Дневникъ»-ը հաղորդում է, որ Թիւրք ու բուլղար կառավարութիւնները համաձայնութեան են եկել վինաթափ լինելու հարցի վերաբերմամբ։ Բուլղարիան պէտք է արձակի 20,000, իսկ Թիւրքիան—40,000։ Համաձայնութիւնը իրականանալուն պէս, Բուլղարիան արձակելու է նորերս զինքի տակ առած բոլոր պահեստի զօրքերին։ Հետզհետէ տեղի ունենալիք արձակումները պէտք է կատարուեն համեմատական չափով։ Միաժամանակ Կ. Պոլսից հաղորդում են, թէ իբր յեղափոխական — գլխաւոր կոմիտետը յայտարարել է, որ պատերազմական գործողութիւնները դադարեցուած են մինչև յառաջիկայ գարուն, և թէ Դուեն ևս հրաման պէտք է անի հալածանքները դադարեցնելու համար ու զբաղուի բարենորոգումների գործադրութեամբ մինչդեռ Ռազլոգի և սահմանադլխի միւս կազմերում ընդհարումները դեռ ևս շարունակւում են։ Այրուած է Գարդովո գիւղը, Ցարևոն բոցերի մէջ է և այդ առաջ է բերում նորանոր դաղթումներ։ Դաղթականական հոսանքը Բիլօ, Սամոկով, Դուբնից և Բուրգաս քաղաքները դեռևս շարունակւում է։

ՆԻՒ-ԵՕՐԿ.— Ֆրանսիայի ու Միաձն-Բրիտանիայի միջև համաձայնութիւն է կայացել ընդհանուր միջազգային դատարանի պայմանագրի հարցի մասին։

ՍՈՖԻԱ.— Նախընտրական ճանապարհորդութիւնը կատարելուց յետոյ, հակառակորդ կուսակցութեան պարագլուխները գնացին Տրնովա։ Ստամբուլովեանները, օգտուելով ոստիկանութեան ցոյց տուած անմասնակցութիւնից, փողոցներում կռիւներ առաջ բերին և յարձակում գործեցին հակառակորդ կուսակցութեան պարագլուխներին ուղեկցող մարդկանց վրայ։ Ամ ու սարսափը տիրում է ամբողջ քաղաքին։ Կռուի մէջ դիմել են գաւազանների և ատրճանակների. հարկաւորուել է զօրքի միջամտութիւն։ Վիրաւորուած է մի քանի մարդ, որոնց թւում և բրիգադի հրամանատարը։ Լրագրները այդ անցքը համարում են քաղաքային պատերազմի սկիզբը։

Կ. ՊՈԼԻՍ.— Դուբը Կաստրիայի արքեպիսկոպոսին գրաւոր զգնգատ է ուղարկել այն մասին, թէ բուլղար հրոսակախմբի խումբապետ Չակալարովը իւր մարդկանց հետ Կաստորիայի շրջանում սպանութիւններ է կատարել, մի քանի տուն այրել և դիակներ այլանդակել։

## «ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ԳԱՅԱՍԽԱՆՆԵՐ

ԹԻՓԼԻՍ,—Տ.-րին եթէ բան ունէք ասելու, մէկը խմբագրատուն և ձեր ասելիքն ասացէք ու պատասխանը ըստացէք։ Երբ մի բան տպում ենք, երևի պէտք է, որ տպում ենք։

ՕՐԷՆԲՈՒՐԴ.—Ս.արք. Գ.-ին։ Համաձայն ձեր արած կարգադրութեան «Նոր-Դար»-ը կուղարկուի այսօրուանից այդտեղ։

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

## ԾԱԾ ՏԱՐԱԲՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՓԼԻՍԻ ՍՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Ռուսական օպերա

Աճ տեպարիզ Նորին Մեծութեան

ՍՈԼԻՍՏ Ն. Ն. ՖԻՓՆԵՐԻ

Շաբաթ, սեպտեմբերի 27-ին,

առաջին «Փալա» ներկայացում.

# ՀՈՒԳԵՆՈՏՆԵՐ

Օպերա 4 գործ., երաժ. Մէյերբերի։ Մասնակցում են. ս. ս. Դալցինա, Զիժովա, Կարտաւինա, Սելիւկ-Ռոզնատովսկայա, Լելինա, Ցրոյնիկովա, պ. պ. Ֆիգներ, Իլիչչենկօ, Գլադկով, Ջմակով, Կլիւգներ, Սանգուրսկի, Ֆեոդրով, Գրիներով, Դաւրիլով, Գերելի։

Գլխ. ռեժ. Ն. Ն. Բոգոլիւբով։

Գապելմայստեր Ե. Դ. Էսպոզիտօ։

Սկիզբը ժամը 8-ին երեկոյեան

Ազգ. —Վաղը, կիրակի, սեպտեմբերի 28 ին, կներկայացուի 1) «Ռիգոլետօ», օպ. 4 գործ. երաժ. Վերդիի, 2) Բալետի դիւերտիսմենտ։ Երկուշաբթի, սեպտ. 29-ին, կներկայացուի

1) «Պայազի, մասնակցութեամբ Նորին Մեծութեան սոլիստ Ն. Ն. Ֆիգների։ 2) I և II «Գոպելիա» Բալէտից՝ երաժ. Դելիբի։ Տոմսակները ծախւում են։

(252) 1—1

---

Բագու, Բոնդարենաա փողոց, № 133, Տեխնիքական ուսումնարանի մօտ։

ԻՒԶԲ ԱԶԵՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ

Նախապատրաստում է աշակերտները պետական միջնակարգ դպրոցների առաջին երեք դասարանները մացնելու համար։ Պայմանների մասին հարցնել առաւօտները 9-2ժ.

(238) 10—3

---

## ՄԱՍՍԱԺ Ս. ՋՄԻԱՆԻՆ

Օլեօգրաֆ պաճկեր

Ս. Էջմիածնի 1600-ամեակի առթիւ։ Ամեն մի ճշմարիտ հայի սրտին մօտիկ նուիրական Ս. Տեղւոյ այս զեղեցիկ նկարը, 75 սանտիմետր մեծութեամբ և 12 գոյնով, պատրաստուած է խնամքով և վաճառւում է հատը 2 ր., ճանապարհածախսով 2 ր. 18 կոպ. Ցանկացողները պիտի դիմեն՝ Армавиръ (Куб. обл.), фотографу М. Папазянъ,

Կարելի է դիմել նաև Ռոստով-Դոնի վրայ, Վլադիկաւկազ և Ըրմաւիր եղբ. Գուրջեաններին։

5—2


ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

ԾԻՐՈՒԱՆԶԱԴԻ

ԺՈՂՈՎԱԾՈՒ ԵՐԿԵՐԻ

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԸ

*Որ պարունակում է՝ «Նորերից Մէկը», «Օրիորդ Լիզա», «Քաթմա եւ Ասադ», «Տատունցինց տարի անցած», Թանկագին կապանք», «Խելագարը», «Շըջանից Արտաքսուածը», «Արտիստը» վէպիկներն ու պատմուածքները եւ «Ծւգինէ» ղրաման։*

**Սեպտեմբերի 20-ից կը ցրուի բաժանորդներին**

*Այս հատորը կուղարկուի միայն նրանց, որոնք բաժանորդագրութիւնը վճարած են ամբողջովին։ 4 հատորի բաժանորդագրութիւնը շարունակւում է.*

**Թիֆլիսում 4 ր. 50 կ.**
**Օտարահպատրներում 5 ր. 50 կ.**
**Առանձին հատորների գինն է 1 ր. 50 կ.**
**Մասուլի տակ է III հատորը**

Դիմել Կենտրոնական և «Գուտտենբերգ» գրավաճառանոցներին և
(244) հեղինակին—Тифлисъ Ширванзадэ 12—6



Ֆինանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնուող

ՀԱՏՈՒԿ ՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ՆԻԿՈՂԱՈՍՈՒ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից ընդունուած է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում

ՍՈՂՈՐՏՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ

երկու սեռի անձանց՝ գործնական ձևով հաշուապահութիւն 4½ ամսում։

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

1) Իտալական կրկնակի հաշուապահութիւն արդիւնագործութեան բոլոր ճիւղերի վերաբերեալ, վաճառականական, բանկային, յանձնարարական, գործարանական, նաև նաւթարդիւնաբերական և նաւթագործական հաշուապահութիւն։ 2) Առևտրական թուաբանութիւն 3) Առևտրական թղթակցութիւն։ 4) Մուրհակային և առևտրական օրէնքներ։ 5) Վայելչագրութիւն և տպագրման ամենավատ ձեռագրի։ 6) Թուաբանութիւն համրիչի վրայ 7) Դրելու վարժութիւն «Բեմինգտօնի» գրելու մեքենայի վրայ (կամաւոր)։

Կուրսերի համար դասատուներ են հրաւիրուած հանրակրթական կրթութիւնով և իրանց գործին մասնագէտ մարդիկ, որոնք հասատուել են իրանց պաշտօնում ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից. գիպլոգրութեան համար ևս հրաւիրուած է մի գեղագիր նկարիչ։

Ընդունելութիւնը ամեն օր ժամը 5 մինչև 7 երեկ.։ Պարապմունքները սկսւում են 1903 թուի սեպտեմբերի 15-ից պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ՝ 60 բուրլի վճարով ամբողջ դասընթացքի համար։

Դասընթացքը աւարտողներին տրւում են, ֆինանսների նախարարութեան թոյլատրուած ծրագրի համաձայն,ատեստատներ։

Ցանկացողներին խնդրում ենք դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրողին Թիֆլիսում, Н. В. Абрамяну Николаевская ул., № 46, ամենայն օր։ Ծրագիրը ուղարկւում է ձրի։

Վերևում յիշուած ձեռնարկը ծախւում է Ռուսիայի բոլոր գրավաճառոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պոստի ծախս վճարելու։ Գինն է 3 ր. 50 կոպէկ։

(216) 20—18



# ԱՒԵՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

(Тифлисъ, Сололаки, Лермонтовская ул. № 9)

Աւետրական կուրսերի նպատակն է մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողներն ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկաները սրանք են. 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրական Թուաբանութիւն 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային, 4) Թուաբանութիւն համրիչի վրայ 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն և 7) Գեղագրութիւն (վատ ձեռքի почеркъ—ուղղելը)։

Ուսումն սկսուելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնները սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչ 12-ը և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում. Սոլոլակում, Ալէքսանդր Փրիլուցովի տանը № 9, Լերմոնտովսկայա փողոցում։ Ծրագրերն ու կանոնները կարելի է ստանալ **ԶՐԻԱՊԵՍ** կուրսեր հիմնողի տանը։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Въ Тифлисъ, С. П. Мануэльяну.

Զրի ուսում ցանկացողներին գրող մեքենայի վրայ։ Պարապմունք-
(188) ները կուրսերում լինում են ամեն օր։ 25—23



*Նոյն օձանելիքը վաճառելու թոյլ է տրուած Վարչական բժշկական վարչութեան կողմից առևտրի ընդհանուր հիմունքներով։*

**ԵՍ**

**ԱՆՆԱ**

**ՉԻԼԵԱՓ**

Երկարացրել եմ իմ անսովոր երկայն (185 սանտիմետր երկայնութեամբ) մազերս, որոնք յիշեցնում են լորելէյի մազերը,—չը-նորհիւ իմ հնարած առանձին օծանելիքի 14 ամսուայ գործածութեան։ Այս օծանելիքը ճանաչուած է իբրև մազերը թափուելու դէմ ամենալաւ միջոց, որը մրևնոյն ժամանակ նպաստում մազերի աճմանը և նրանց արմատները պնդանալուն. այս օծանելիքի չնորհիւ տղամարդու մօրուքը խիստ առողջ կերպով աճում է, նմանապէս (մինչև անգամ կարճատև գործածութենից յետոյ) գլխի և մօրուքի մազերը բնական փայլ են ստանում. բնդմին օծանելիքը մազերը պահպանում վաղաժամ սպիտակելուց ծեր հասակում։

*Ի ՄԲԱՆԿԱՑԻ ԳԻՆԸ*

**3, 5 եւ 8 ռուբլի**

Հատանելիք փողը ստացուած ատամեակ ու պարկումէ է պոստով աիեն օր աշխար ամեն կողմերը ուղղակի գործարանից, հին պիտի ուղղուեն բոլոր պատուիրները։

**ANNA CSILLAG**

52—27 Wien I (82)


Дозв. Цензурою 26-го Сентября 1903г. Վերջիչն և Կամենմախեր Типографія Вереичевъ и Каменмахеръ Михайл. пр. Телеф. №852